ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 253 - Ա **16 հուլիսի 2019 թ**

ԱՄԱՌՎԱ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՈՂԱՓԵՐՈՒՄ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՊԱՏՇԱՃ ԵՎ ԱՐԱԳ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼՈՂԱՓԵՐԻ ՋՐԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՆԱԿԵՏԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Ամառվա ամիսներին Սևանա լճի հանրային լողափերում տուժած անձանց անհետաձգելի բժշկական օգնությունն ու սպասարկումը պատշաճ և արագ կազմակերպելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և «Ճամբարակի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեններին՝

1) 2019 թվականի հուլիսի 16-ից օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում ժամը 09:00-ից 21:00-ը հանրային լողափերի ջրափրկարարական հենակետերում սահմանել բժշկական ծառայության հերթապահություն «Սևանի բժշկական կենտրոն» և «Ճամբարակի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցներով.

2) աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով մշակել ու հաստատել հերթապահության ժամանակացույց և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան.

3) կատարված աշխատանքների մասին յուրաքանչյուր երկուշաբթի տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հանրային Անուշավան Ղազարյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ